

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂՈՒԿԱՆՈՍԸ Ս. ԷԶՄԻԱՍՏՆՈՒՄ.

« Գարձեալ ի յելանել Հայրապետին ի յաթոռոյս՝ ունել պարտի ի պարանոցին զգօտի պատշաճագոյն գունով ազնիւ և վայելուչ ինքեան և տեսողաց՝ կախեալ երկոքումք ուսովքն և լանջովն զառ ի վայր։ Եւ գաւազանն ի ձեռին՝ զերիս կամ աւելի պակաս յառաջընթաց հետեակրս ունելով առաջի իւր։ Իսկ եթէ երիվարաւ իցէ ելանելն թէ առ թագաւորս և առ յայլս մեծամեծս և յայլ ուր և կամիցի՝ ունիլ պարտի նոյնպէս զայս կանոնս զորս ասացուք։ Այլ և ընդ նոսին զերիվար մի թամբով կրեցեալ ի միոյ հեծելոյ՝ քան զամենայն յառաջագնաց, որ ասի էրպէս։ Եւ զկնի եղաքակրին՝ զերկուս սեազլուիս նոյնպէս ձիաւորեալս՝ ի ձեռին միոյն ձողարարձ խաչ արծաթեայ և ի ձեռին միւսոյն՝ գաւազան արծաթեայ, վառեալ ոսկեթել և ազնիւ քօղիւք։ Այլ և ի յելանելն և ի մտանելն ևս զմեծամեծ զանգակսն հարկանիցեն ընդառաջ ելմամբ և հանգիսիւ ։ »

Զամբռ տպ. ի Ս. Էջմ. եր. 62.

Յանուար Սինոդի հեռագիրը արդէն հաղորդել էր որ Վեհափառ Հայրապետը հրաժեշտ տալով Տփլիսի քաղաքին՝ ամսոյս 25 ին բարեհաճել է ուղևորել ի Մայր Աթոռս։ Երկուշաբթի՝ ամսոյս 28 ին նորին Վեհափառութիւնը սպասւում էր Երևանում, ուստի Ամեն. Տեղակալ Սրբազան Հայրը և Սինոդի Գերապատիւ անդամք աճապարելով Երևան՝ շնորհաւորեցին նորին Վեհափառութեան գալուստը՝ և վերադարձան Մայր Աթոռս. Երևանում մնաց միայն Ամեն. Տեղակալ Սրբազան Հայրը։

Երեքշաբթի, ամսոյս 29 ին առաւօտեան 10 ժամին զանգակադերբեակ հնչմամբ Մայր Աթոռոյս միաբանութիւնը և ձեմարան՝ աշակերտք ժողովուրդին եկեղեցի ընդունելութեան հանդերձանք համար պատրաստուելու։ 11 1/4 ժամին թափօրը կազմ պատրաստելի կալաւ ձեմարանի հիւսիսային կողմը գանուած ընդարձակ հրասպարակի վերայ, որ հոժ էր բազմութեամբ տրանց և կանանց։ Ընդունելութեան թափօրը կազմուած էր ըստ սյամ։

Սինոդի անդամ. Գեր. Մեսրոպ Նախիկոսոս Ամբաստան և Կարուց առաջնորդ Գեր. Գրիգորիս Նոյխիոսոս Աղուանեան զգեստա-

ւորեալ՝ կրումէին մինը Աւետարան իսկ միւսը սուրբ Աստուածա-
մօր պատկեր. չորս վարդապետներ՝ ունէին հովանին. երկու դպիր-
ներ՝ Հայրապետական քօղը, երկու վարդապետներ և երկու սար-
կաւագներ՝ բուրջաւներ. չորս դպիրներ՝ քշոցներ, եպիսկոպոսք և
վարդապետք՝ շուրջաւաւորեալք, իսկ երգեցիկ աշակերտք շա-
պիկներով:

Ժամը 12 - ր անց՝ Մայր Աթոռոյս գիւղի, և երեք շրջագայ
վանորէից բոլոր զանգակները սկսեցին սրուտալ, երևաց Վեհ.
Հայրապետի կառքը խուռն բազմութեամբ հեծելոց՝ որոց առաջ-
նորդումէին գաւառիս Գերազնիւ Գաւառապետը իւր օգնականի
հետ. ուղեորու թեանը բաւական հեռաւորութեամբ կարապետու-
մէին կանաչներ զգեցած պարսիկ գլխարկներով երկու անձինք՝ քա-
շելով շքեղ համետեալ երկու ձիերը, որոնք էլ էն կոչվում —
Հայրապետական ուղեգնացութեան մի շուք՝ որ շատ հնուց սովո-
րական է: Վեհ. Հայրապետի կառքից սուղ ինչ յառաջ, աջ և ձախ
կողմից աշտանակումէին երկու վարդապետներ կրելով Հայրապե-
տական դրօշակիր խաչ և գաւազանը:

Աւղեկցումէին Վեհ. Հայրապետին Ամեն. Տեղակալ Արքազան
Հայրը, հրաւիրակ Գեր. Տեարք Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան
և Սինօզի Անդամ Յովակիմ Եպիսկոպոս, Աստրախանի թեմի կա-
ռավարիչ Գեր. Սուքիաս Եպիսկոպոս և Երևանի թեմի Փոխ - Թե-
մակալ Գեր. Քէորգ Եպիսկոպոս: Կառավարու թեան կողմից ու-
ղեկցումէին Նորին Գերազանցութիւն Ամբարդանով՝ և Սինօզի
Պրօկուրօր Գերազնիւ Նիկողայոս Տէր Յովսէփեան, Երևանի նա-
հանգապետի կողմից Գերազնիւ Արշակ Տէր Յովսէփեան, Նոր
Բայազետու Գաւառապետ Գերազնիւ Վաղարշակ Շահխաթուն-
եան և այլք:

Գնացքը կանգ առաւ թափօրից փոքր ինչ հեռու: Նորին Վե-
հափառութիւնը վայր իջաւ կառքից և ընդունելով Վաղարշա-
պետի հասարակութեան կողմից ներկայացրած այ և հայր օրհ-
նեց նոցա. փոքր ինչ յառաջելով բարեհաճեց ընդունել շուրջաւ
խաչ և գաւազան, և մտաւ ամպհովանու տակ:

Թափօրը սկսեց շարժուել հասարակաց պարտիզի միջանցքով
գէղ ի տաճարը, կարգ ըստ կարգէ ըստ այսմ:

Նախ՝ երկու շաթիրները կարմիր վերնազգեստով՝ յատկացեալ
ասաները ձեռքներին. յետոյ ձեմարանի աշակերտները վերար-

կուսով. խոսչ խոսչվառ բռնողները և երգեցիկները խուճբը ժամա-
շապկով. երգիչք եղանակուճէին «Հրաշափառ Աստուած» շարակա-
նը, հոգևորականաց դասը շուրջառաւորեալ. զգեստաւորեալ երկու
եպիսկոպոսները. Հայրապետական դրօշակիր խոսչ և գաւազան
բռնող երկու վարդապետները. բուրվառակիրները, որոնք խնկար-
կուճէին Վեհ. Հայրապետին, իսկ Նորին Վեհափառութիւնը օրհ-
նելով ժողովրդեան՝ առաջ էր ընթանում: Նորին Վեհափառու-
թեան յաջմէ և յահեկէ էին Գեր. Տեառք՝ Աստրախանի թեմի կա-
ռավարիչ Սուքիաս Եպիսկոպոս և Երևանի փոխ - թեմակալ Գեր.
Գէորգ Եպիսկոպոս, իսկ Ղարաբաղի թեմի Կառավարիչ Գեր. Գրի-
գոր Արքեպիսկոպոս յետուստ կուսէ հետև ուճէր վերամբարձ կրե-
լով Հայրապետական գաւազանը: Գնացքը Մայր Աթոռոյս արտաքին
գաւիթը մտնելիս՝ դարպասը վայրկենաբար փակուեց՝ որպէս զի
խուճեալ բազմութեան աղագաւ չը խանգարուի գնացքը: Գնացքը
ընթանումէր ծաղիկները և դաշարիները վերայով, իսկ զանգակա-
տան առաջի բոլորակ սալարկից մինչև Ս. Իջման խորանի առաջը
տարածուած էր կարմիր մահուտ: Թափօրը երբ հասաւ եկեղե-
ցուն՝ երգեցիկները սկսեցին երգել «Ուրախ լեր սուրբ եկեղեցի»
շարականը: Վեհափառ Հայրապետը եկեղեցի մտնելուց յետոյ
Սուրբ Իջման խորանի առաջ յատկացեալ ոսկեթել օթոցի վերայ
կանգ առնելով՝ երկու ծնրադրութեամբ առանձնական աղօթք
մատոյց և ապա Աւագ - Առևարար և Սինօղի անդամ Գեր. Երեմիա
Եպիսկոպոսի հետ քաղեց Սաղմոսը «Ուրախ եղէ ես» և ըն: Սաղ-
մոսից յետոյ բուրվառակիրներից մինը ասաց «Սուրբ Եկեղեցեաւս»
քարոզը, իսկ Նորին Վեհափառութիւնը՝ «Ի մէջ Տաճարիս» ա-
ղօթքն: Նորին Վեհափառութիւնը գահաւորակի վերայ բազմած՝
լսեց Գեր. Երեմիա Եպիսկոպոսի բանախօսութիւնը, որով Նորին
Սրբազնութիւնը իղիմաց միաբանութեան՝ շնորհաւորեց Վեհա-
փառ Հայրապետի մուտքը: Վեհափառ Հայրապետը այս բանա-
խօսութիւնը լսելուց յետոյ, յոտին կանգնած ատենարանեց ըստ
այսմ.

«Աայճակնամաքուր մարդարէին են բանքս. «Նկայք ելցուք ի
լեառն Տեառն և ի տուն Աստուծոյ» . կասէ մարգարէն այս
բան՝ իրախոսուած աստուածահայր Ղաւիթ մարգարէի խօս-
քից որ կաղաղակէ «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի
տուն Տեառն երթիցուք մեք» . բայց թէ ինչ պատճառաւ

կուրախանայ մարդարէն Վաւիթ, այդ մասին ինքը ոչինչ չի խօսում, իսկ մարդարէն Ասայիաս կբացատրէ «Օհ ի Սիօնէ, ելցին օրէնք և բան Տեառն՝ յԱրուսաղէմէ»։ Այս իսկ պատճառաւ երբ բարձրաստիճան հողեորականք հողեոր հանդիսիւ կմաննն եկեղեցի, այդ սաղմոսը կասնն «Աւրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք» և որ ի կարգին։ Նոր Սիօն, լեառն Տեառն, տուն Աստուծոյ և Նոր Արուսաղէմ մեզ համար է այժմ մեր Մայր Աթոռն սուրբ Աջմիածին, որոյ համար և Հայ ազգը հողով և սրտով կդիմէ միշտ դէպ ի Ս. Աջմիածին, որպէս զի նորանից ստանայ նորանոր օրէնքներ և հրահանդուի Աստուածային բանիւ։ Աւստի և բարոյական պարտաւորութիւն կայ յատկապէս մեզ Ս. Աջմիածնայ ժառանգաւորացս վերայ այնպէս պատրաստուել, որպէս զի կարողանանք բաւականութիւն տալ մեր տեսչութեան յանձնուած ժողովրդոց, թէ նորանոր բարոյական օրէնքներ և կանոններ տալով նոցա և թէ Աստուածային բանիւ նոցա սիրտը դաստիարակելով. ուրիմն մաղթենք յԱստուծոյ որպէս զի ամենակարողն Աստուած կարողութիւն տայ մեզ այս մեր վրայ դրուած ծանր պաշտօնը և բարոյական պարտաւորութիւնքը սրբութեամբ կատարել և լցուցանել ժողովրդիան ծարաւը։ Աւ որովհետեւ մեր յառաջադիմութիւնը ի բարոյական կախումն ունի Նորին Ապստոլական Մեծութեան Օգոստափառ Թագաւոր Ապստոլ մերոյ ԱՂԼԻՔԱՆԻՐ ԱՂԼԻՔԱՆԻՐՈՎՉԻ խաղաղասիրական զթութենէն, վասն որոյ աղօթենք նաև որ Աստուած շնորհէ Նորին Մեծութեան երկար և խաղաղաւէտ օրեր, Նորա սիրտը զթած և քաղցր պահէ առ Մայր Աթոռս և առ Ազգն մեր և Նորա թագաւորութիւնը՝ անխախտ և անուասան յազգէ յազգ և յորդուոց յորդիս»։

Նորին Ահափառութիւնը իւր բանախօսութիւնը կնքեց «Եւ վասն Սուրբ Խաչի» և «Պահպանիչ» աղօթքով. իսկ թափօրը դուրս գալով եկեղեցուց՝ գնաց դէպ ի Ահաբան։ Երգեցիկները երգում էին Ննորհունակ Սահակ Սարկաւազի գրած և Զայնագրած երգը յանուն Ահափառ Հայրապետի։ Նորին Ահափառութիւնը Ահաբանի մուտքի առաջ կանգնելով՝ «Պահպանիչ» աղօթքով արձակեց թափօրը և ի ձայն երգոց և ցնծութեան հանդիսականաց մտաւ Ահաբան, որի դրան աջ և ձախ կողմերին գունագեղ ծաղիկներով վայելչապէս հիւսուած էին Մ և Կ տառերը։

Այս հանդիսաւոր արարողութիւնը վերջանալուց յետոյ ժամը 1¹/₂ վեհաբանում՝ վեհափառ Կաթողիկոսի հետ ճաշեցին Սինոդի Անդամք և այլ աշխարհական պատուաւոր պաշտօնեայք, իսկ Միաբանից սեղանում հիւրասիրուեցին Վաղարշապատու դիւանատանց աստիճանաւորները ու ժողովրդեան առաջաւորները, խումբն բաղմութիւն ուղեկցաց Վեհ. Կաթողիկոսի, և Մայր Աթոռոյս Միաբանութիւնը, աւելի քան 300 անձինք:

Միաբանից սեղանատան մէջ ըստ առաջարկութեան Գեր. Սերոյիքե Յակոբոսի որստաձայն «կեցցէ» ներուլ կենաց բաժակներ քամուեցին ի պատիւ Օգոստոսիառ Կայսերն ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՁԻ, վեհափառ Տ. Տ. ՄԱԿԱՐ Արքազնագոյն Հայրապետի, Հայ Ազգի և Ս. Էջմիածնի հաստատութեան:

Սրեկոյեան ճրագալոյց և հրավառութիւն կար. զանգակատան կամարների տակ իրանց վերայ էին գրաւում բաղմութեան ուշը գեղեցիկ գրուագները՝ որ մեծ ճարտարութեամբ պատրաստել էր Մեծ. Պ. Մակար Տէր Աարգսեան: Արեւմտեան կամարի տակ կարգացվում էր «ԿԵՅՅԷ Տ. Տ. ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՅՈՅ» : Այս գրուագը՝ որ եղերաւորեալ էր պուսկով՝ ճակատին փայլեցնում էր հայրապետական թագ, աջ և ձախ կողմից առ իշեղ ունենալով իսպ և գուլագան: Հիւսիսային կամարի տակ գրուած գեղեցիկ եղերաւորեալ գրուագի վերայ կարգացվում էր «ՀԱՅԵՅԱՐՈՒՔ ՅԱՅՍ ՏԱՃԱՐ» իսկ հարաւայինի վերայ՝ «ԱՅՍ Է ՓԱՌՔ ՁԵՐ», Աւագ գմբեթի խաչից առ ի կախ՝ գունագեղ լապտերներ ախորժելի լոյս էին սփռում գիշերուայ մթութեան մէջ, իսկ կանթեղներն տանեաց վերայ ու սենեակների ճակատին և լապտերները լուսաւորում էին Տաճարի շուրջանակի ընդարձակ տարածութիւնը: Ճեմարանի աշակերտները իրանց ներդաշնակ և ախորժալուր երգեցողութեամբ աւելի ևս հրապոյր էին տալիս զուարճութեան:

Այս զրօսանքին ի պսակ՝ ճեմարանի աշակերտք գիշերային հանգստեան աղօթքը կատարեցին Մայր Տաճարի զանգակատան առաջի սալարկի վերայ, իսկ ժողովուրդը գլխաբաց խորին լռութեամբ աղօթքին ունկնդրելուց յետոյ, հոգւով և մարմնով մխիթարուած ցրուեց:

Ամսոյս 31 ին յատկացեալ զանգակների երրեակ հնչմամբ Մայր Աթոռոյս Միաբանութիւնը ձեմարանի աշակերտք ուսուցիչներով և բազմաթիւ աշխարհականք հաւաքուեցին Վեհարանի բակը: Հոգևորականք և ձեմարանի աշակերտները իրանց յատկացեալ տեղը բռնելուց յետոյ սկսուեց «Մաղթանք» ը. որին հետևեցին երկու ճառեր՝ միաբանութեան կողմից և մի ո՛րանաւոր ուղերձ ձեմարանի կողմից: Մաղթանքը վերջանալուց յետոյ Միաբանք բարձրացան Վեհարան և նախ քան մատչելն ի համբոյր Սուրբ Աջոյ Նորին Վեհափառութեան՝ Ամեն. Տեղակալ Մկրտիչ Արքեպիսկոպոսը արեց հետևեալ բանախօսութիւնը:

ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Ներկայացուցանելով Ձերում Վեհափառութեան զուխտ միաբանութեան սրբոյ Աթոռոյս էջմիածնի ի շնորհաւորութիւն մեծաշուք և բարերեր գալստեանդ և յորդիական ջերմեռանդն համբոյր Աստուածած Սջոյդ սրբոյ՝ բարեպատեհ է ինձ ի սերկեան ժամուս յիշել աստանօր զգեղեցիկ բան մարգարէին «Նրանի էքեզ Իսրայէլ, զի հաճոյքն Աստուծոյ ծանօթք մեր են»:

Միաբանութիւնս յառաջագոյն բազմիցս վայելելով զարգասիս Հայրական խնամոցդ, այժմ ահա շուրջ զՁեօք բոլորեալ, դարձեալ ակնկալէ ի Հայրապետական բարձր իշխանութենէդ վայելել զնոյն Հայրականն շնորհ, սէր, գթութիւն, նա մանաւանդ զբնաձիրն Ձեր անյիշաչարութիւն: Իսկ փոխարէն այդոցիկ ամենից բարեմտութեանց Ձերոց և վայելուչն բարեմասնութեանց, ի դիմաց ուխտի միաբանութեանս վստահ համոզմամբ երաշխաւորեմ, զի մեք ամենեքին հաստատապէս եկեալ կայեալ եմք յայնմ ուղղութեան և ի շաւիղս պարտաճանաչութեան՝ առ որս Դուք առաջնորդելոց էք Հայրաբար, և հաւատամ թէ՛ ուխտիք հաւատարմութեան ցուցանել ունին Ձեզ զզատրաստականութիւն անձնընծայ ի բարգաւաճումն և ի փառս սրբոյ Գահին Միածնաիջի և ի պարծանս արժանաժառանգ Վեհափառ Գահակալիդ:

ՏԵՂԱՊԱՀ ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Յ 34 Հոկտեմբերի 1885 - թ.
Ի Ս--րէ Էջմիածին:



Մկրտիչ Արքազան Արքեպիսկոպոսի բանախօսութիւնից յետոյ Նորին Վեհափառութիւնը ասաց.

« Արքազան Պօղոս Առաքեալը երբոր քաղաքներից անցնելով գընումէր Երուսաղէմ, ամենայն տեղ նորան ասումէին. « Պօղոս, Երուսաղէմում շատ նեղութիւն և անձկութիւններ են մնում քեզ: Բայց Առաքեալը առանց վհատելու ապագան Աստուծոյ կամացը թողնելով՝ շարունակեց իւր ճանապարհը: Ես ևս երբ քաղաքներից անցնելով Ս. Էջմիածին էի գալիս, ամենայն տեղ լսումէի. « Սուրբ Էջմիածնում շատ նեղութիւններ և անցկութիւններ պիտի կրես: » Սակայն ես հետեւելով Արքազան Պօղոս Առաքեալին, ապագան Աստուծոյ կամաց թողնելով ամենեւին չէի երկմտում, որովհետեւ իբրև միաբան Մայր Աթոռոյս և ծանօթ, բոլորիդ բառաւորաբանական բանին « ճանաչեմ զիման և ճանաչեմ յիմոցն: » Այս ճանաչողութիւնը երկուստեք քաջ իսկ երաշխաւոր է թէ, ոչ մի նեղութիւն և անձկութիւն պիտի չը կրէ ոչ մինը մեզանից: Դուք իբրև որդիք ինդրեցէք ինձանից ինչ որ ցանկանաք, իսկ ես իբրև հայր՝ հասարակաց բարին աչքի առաջ ունենալով կը հոգամ ինչ որ պէտք է և միանգամայն կը պահանջեմ ձեզանից Բարեկրօն-ն-ը և Աստուծոյ շնորհակցութիւն և Աստուծոյ պաշտութիւն ի կենցաղս, « զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է: »

Կան բաներ, որ պիտի խօսեմ ձեզ, բայց այժմ ոչ. առ այժմ՝ ի վերջ բանիս՝ կաղօթեմ և կօրհնեմ զամենեսեանդ, զօրանալ ձեզ յԱստուծոյ շնորհակցութեան և ի Բարեկրօն-ն-ը և ըստ կոչման և աստիճանի պարտուցդ, հանգիստնալ դաստիարակ Աստուծոյ շնորհակցութեան և Բարեկրօն-ն-ը բանիւ գործով և արդեամբ: »

Երբ ամենքը խորին ակնածութեամբ հետ զհետէ համբուրումէին Նորին Վեհափառութեան Սուրբ Աջր, Երուսաղէմայ Սուրբ Յակոբեանց վանուց նորոգ ընարեալ լուսարարապետ և ռուսաստանեայցս նուիրակ Սահակ վարդապետ Խաչայեան ի կողմանէ իւր միաբանութեան շնորհաւորեց Նորին Վեհափառութեան շնորհաբեր գալուստը յայտնելով որ Ս. Յակոբեանց վանքը յար անբաժան մնալով Արարատեան Մայր Աթոռից, նոյն զգացումն ևս տածումէ այժմ և պիտի յարատեւէ յայնմ, աղօթելով առ Աստուած վասն անասան մշանջենաւորութեան Կաթողիկէ Մայր եկեղեցւոյ Արքայ Էջմիածնի՝ ցկատարած աշխարհի և վասն բարօ-

բուժեան և երջանկաւէտ կենաց Վեհափառ գահակալի Սրբոյ մե-
րոյ Գրիգորի Լուսաւորչի, Նորին Վեհափառութեան օրհնութեան
և Հայրապետական խնամոց ակն ունելով: Նորին Վեհափառու-
թիւնը բարեհաճեց արտասանել. « կարօտ էր Սուրբ Նրուսազեմայ
Ս. Յակոբեանց վանուց միաբանութեան աղօթից և անգնահատելի
նոյն միաբանութեան առ Մայր Աթոռս տաժտժ որդիական զգաց-
մունքը: »

Հողեօրական դասից յետոյ Վեհափառ Հայրապետի Սուրբ Աջը
համբուրեցին և Նորա յուսադրական ու քաջալերիչ օրհնութեան
արժանացան ձեմարանի աշակերտք, ուսուցչական խումբը, Ալնօ-
ղի և Վաղարշապատում եղած Դիւանատանց աստիճանաւորները
Վաղարշապատու առաջաւոր անձինք և այլք:

Մաղթանքին կարդացուած ճառը և ուղերձը:

ՀՈՎՈՒԱՊԵ՛Տ ՄԵԾ

Ի հատանելն Քո զուղի առ ի ժամանել ի Մայր Աթոռս, որք
առ ճանապարհուն էին քաղաքք, գեօղք՝ դղրդէին ամենեքեան, և
այր զարամբ ելեալ՝ ցանկային տեսանել զՀայրապետոյ մեծ և ըն-
դունել զօրհնութիւնի Մեծէ Քահանայապետէդ: Ընդ համբաւ գա-
լստեան Քո դղրդէին և սիրտք հայ որերոյն և ի թունդ ելեալ՝
աճապարէին զորդիականն ցուցանելով զակնածութիւն՝ լսել զօրհ-
նութիւն և զաւետիս գործոցն բարեաց՝ զորս սխրագործելոց է
Հովուապետոյ մեծ, ի պայծառութիւն եկեղեցւոյ մերոյ սրբոյ և
ի մխիթարութիւն ազգի: Ամենեքեան զուշս համբարձեալ առ
Տէրդ մեր Հողեօր՝ ընդ միտս ասէին. Տէր, ողորձաց Քզ:

Ընդ մուտ Քո ի նախադրուհս Այրարատ աշխարհի գղրդեցաւ
երկիրն ողջոյն և Մայրս մեր Սուրբ Էջմիածին: Սիրտք մեր գը-
ղրդին և ի թունդ ելանեն, և երանի է մեզ՝ զի տեսանեմք զՀայրդ
մեր եկեալ հասեալ, որոյ առաջի ընթանայցեն անշուշտ արդա-
բութիւն և ուղղութիւն ի գատելն և ի խնամելն: Երանի է մեզ
զի տեսանեմք զսիրելին ի սենեակ իւր, ի մէջ մեր, ընդ մեզ:

Օրհնեալ է մուտ Քո, ո՛վ Հայր մեր և Տէր: Ողջունեմք զգալուսա
Քո, ո՛վ Այրդ Աստուծոյ և ընդ Սաղմոսոյին աղօթեմք. « Տէր պա-
հասցէ զՔեզ յամենայն չարէ. պահասցէ Տէր զանձն Քո: Տէր պա-

հետցէ զմուտ և զել Քո՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան » (Սաղմ. ձի.) :

Ամբ այրիութեան մօրս մերոյ Սրբոյ Էջմիածնի յերկարեցան յայս նուագ. Իու, Քահանայապետ Մեծ, որ կոչեցար բառնալ զայրիութեան Սորա զսուգ՝ բազում ջանից և հոգոց պէտս ունիս, որպէս զհարսն զարգարել զՍա զարդու՝ գործոցն կարգաւորութեամբ: Աստուած, որ զՀոյնապետականն ետ Քեզ զգաւազան, զխաչ և զԱթուռ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Առաւորչի, տացէ և զօրութիւն — գաւազանաւն իշխանութեան՝ դատել և նորոգել զբարոյական և զնիւթական շինուածոցն զխանդարմունս, որք ի Սմա, խաչիւն՝ ի խոնարհութիւն և ի սէր կոչելով զամենեսեան՝ հրաշագործել զուղղութիւն և զարգարութիւն առ ի մուշկանել ի վայրի դաշարուջ և առ ջուրս հանգստեան զայնոսիկ՝ որք ի խրնամս Քո են հաստատացեալ, և Աթուռովն՝ զամս ձիգս վայելել յարդիւնս վաստակոց ի շինութիւն և ի պայծառութիւն ազգի և եկեղեցւոյ:

Տեսանելով զՔեզ ի միջի, Հայրաստեմեծ, զԱրեւիկի ի սենեակ իւր, երգեսցո՛ւք զսէր: Երգեսցո՛ւք զսէր առ Հայրդ մեր խնամակալ առ ի զօրավիգն լինել Քեզ ի գործսդ Քո ազգաշահս, ըստ կոչման և պարտուց մերոց: Երգեսցո՛ւք զսէր առ եկեղեցին Քրիստոսի, վասն պայծառութեան նորա ոգի ի բռին ջանալով: Երգեսցո՛ւք զսէր առ ազգ մեր և ժողովուրդ վասն բարեաց նորին և յաջողութեան գուն գործելով:

Ընդ հովանեալ Քահանայապետիդ Մեծի ուխտ մեր առ Աստուած լիցի սէր աննենդ և անխարդախ: Եթէ սիրտք մեր զլինիցին տարանջատեալք, այլ զօգեսցին ի մի յիսուսաւանդն սիրով՝ ապաքէն կատարումն բարի բարի նպատակաց Քոց երաշխաւորեալ լիցի. քանզի ըստ Առաքելոյն՝ «Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. Սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամբարհաւածէ, ո՛չ հպարտանայ, ո՛չ յանդգնի, ո՛չ խնդրէ զիւրն, ո՛չ զրգուի, ո՛չ խորհի զչար, ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն. ամենայնի տեւէ, ամենայնի հաւտտայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ» . (Առաջ. Կորնթ. գլ. ԺԳ. 4—7 :

Ի ժամուս՝ յորում միտք լռեն ի դատելոյ և սիրտ զգալովն միայն գործէ, ի մէջ եկեղեցացեալ բազմութեանս, սուաջի Մեծի Քահանայապետիդ ուխտիւք խնդրեսցուք ի Տեսունէ զօրանալ սի

բախն. առանց նախանձու, առանց ամբարհաւածութեան, ոչ
 խնդրելով զմերն այլ զաստուծոյն՝ անսուլ սուրբ պատուիրանաց
 Մեծի Քահանայապետիդ և առաջադրութեան կոչման մերոյ և
 պարտուց: Երեքին սորա — հաւատ, յոյս և սէր լիցին մեր առաջ-
 նորդք: Հաւատովք զօրացեալ, յուսով պնդեալ զմէջս մեր՝ սիրովն
 ի գործ լիցուք առանց երկմտութեան ի շինութիւն և ի պայծա-
 ւութիւն ազգի և եկեղեցւոյ օրհնութեամբ Մեծի Քահանայապե-
 տիդ՝ որում ապշէ՛Տէր Աստուած կեանս երկայնս և խաղաղաւէտս.
 Ամէն:

Հայրապետ Մեծ,

Քումզ Ահհափառութեան

Ամենախոնարհ ծառայ և օրդի

Յուսիկ Աարդապետ Մովսիսեան

Միաբան Մայր Աթոռոյ Արքայ Էջմիածնի:

ՅԻՆ ՀԻՄՆԵՆ. 1885 թ.

ՅԱՍՏՈՒԱԾԱՊԱՍԱԿ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԼՄՆՆԵՅՆ ՀԱՅՈՑ

ՈՒՂԷՐՁ

Ձի՛ վեհ արդեօք և զի՛ չըքնաղ աստուածեան
 Հրաշից, սիրոյ այս մեզ հանդէս գրթութեան.
 Ձի՛ գեղանի այս լոյս և այս արիւննի
 Ենորհաբաշխ ի գահ ծագէ Գրիգորի:

Որ ընդ յոգունս կըրթեալ հանդէսս ճրգանց
 Ի քիրտն յարիւն սրբոց մերոց նախահարց,
 Քեզ ընտրելոյդ արդ շնորհեն զայն երկինք
 Քեւ ծաղկեսցին Քե յոյս և փառք մեր ընդ ձիգ:
 Ընկա՛լ ուրեմն ընկալ ըզսուրբ զայն Մական
 Ըզմեծ պարտուց և ըզջանից Գրիգորեան.
 Յորմէ շնորհաց հատան ճաճանչք երկնային
 Ընդ Հայաստան ծաւալեցան բընաւին:

Ընկալ զայն ցուպ, զոր կրեցին ձեռք սրբոց
 Վրթանիսի և Ներսիսի հարց մեյոց,
 Ըզզօրութիւն նոցունց, զոգի և ըզսէր
 Վաստակելոց ի փառս ազգին անվեհեր:

Այն ցուպ նոցունց երկնապարզ և հըզօր
 Սրար նշանս ազգի ազգի բիւրաւոր,
 Շուք եղ աշխարհ այնրմ և զայն մեծարեաց,
 Օճան եղ և ի փրկութիւն հայրենեաց:

Ընկալ, ընկալ զՊարթևին Սահակայ
 Ըզլուսատու զայն գաւազան ըզճաղկեայ,
 Որ փայլեցաւ ի սուրբ աջուամբն նորին
 Քան ըզ պայծառ ճաճանչաւէտ արփենին:

Հանգունապիպ մարգարէին մեծ և սուրբ
 Որ ի վիմէ բաշխէր պասքեալ ազին ջուր,
 Ջուր կենդանի իմաստութեան և շնորհաց
 Հան, բըղխեցոյց ըզ հայրենիս ուռգեաց:

Ընկալ ասլա, ընկալ ի գիրկըս Քոյին
 Զայս ուխտ և զայս Քեզ որդեգրեալ մանկրտին,
 Զեկեղեցի զհօտ նորին ի բաստ գեր
 Տարեալ հանցես նախկին ի փառս անդր ի վեր:

Զերումդ Վեհափառութեան

Ի զիմաց համօրէն ճեմարանի

Մկրտիչ Պալէան.

Ի Ս. Էջմիածին.

1885 թի Հոկտեմբեր 29.

Մատուցեալ նորին Վեհափառութեան.

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

ԸՆԴ ՄՈՒՏ ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ ՊԱՏՐԻԱՐԳ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Ս. ԷԶՄԻԱԾԻՆ.

Աստուած հրգօր, դու որ զՀայս մինչև ցայս վայր խնամեցիր,
Ի թշնամեաց գաղտնի, յայտնի որոգայթից փրկեցեր,
Ազգիս մերոյ Գրիգոր, Ներսէս, Սահակ, Յովսէփ յարուցեր,
Պահեա՛ յաւէա զՅաջորդ ոոցին նոր Հովուապետս անվեհեր:

Օրհնեա՛ զմուտ ի Քէն ընտրեալ Տեառն ՄԱԿԱՐԱՅ քաջ դիտի
Ի փառահեղ յայս վեհ Տաճար յորում իջեր յուռն ոսկի,
Բարձ զքարինս որք խոչընդոտն կան սիւռեալ յիւր ուղի,
Զի կարապետ լիցի Հօտին յարօտ առատ դալարի:

Տէր Սաբաւօթ լեր զօրաւիգ քեւ պսակեալ Վեհին մեր,
Արա՛ զսա աղ համեմիչ, ժիր մշակաց քաջալեր,
Եւ Ղեկավար ճարտարապետ յալիս ծփեալ ամեհի,
Հանել յանքոյթ նաւահանգիստ զնաւ ազգիս խղճալի:

Արմատախիլ արա՛ զորումն, տատասկ եւ փուշ յիւր այգւոյ,
Յորեան ատոք, խաղող եւ թուղ առատօրէն աճեցո՛,
Լէր օգնական մեր նոր Յեսուայ, յընթացս արիւնոյն կասեցո՛,
Զի յաղթեսցէ ախոյենից աշխարհայաղթ Քաչիւ քո:

Հանցէ զազգն Թորգոմական յերկիր ուխտին մեղրահոս,
Բացցէ զաղբիւրս նորոգ խցեալս կրկին հորգել գետահոս,
Պասքեալ մանկուոյն առատ ջամբել զմայրենին կաթ անուշ,
Որով լիցին ծառ պտղաբեր եւ քաղցրաբոյր վարդ անփուշ:
Պահեա՛ զԳահն պարթեւական եւ զԳահակալն անսասան,
Տո՛ւր կեանս առողջ Հովուապետիս եւ Իւր հօտին յաւիտեան:

Սարգիս Գևորգի Վանեցի.

1885 -ի Հուլիսի 29 ի Ս. Էջմիածին.